Ի. ՍՏԱԼԻՆ

ԳՅՈՒՂԱՏԻՍԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

★

ՊԵՏՀՐԱՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

9144

329.15 (47) 333.3
05 FEB 2018

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ի. ՍՏԱԼԻՆ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատասխան ընկ. Ցաե—սկուն

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

ԱԶՈՒՅԻՆ
ՀԱՍԱՐ
Գրադարան
II-28846ԳՐ

И. СТАЛИН

О ТРЕХ ОСНОВНЫХ ЛОЗУНГАХ ПАРТИИ ПО КРЕСТЬЯНСКОМУ ВОПРОСУ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատասխան ընկ. Յան—սկուն

Ընկ. Յան—սկի։

Ձեր նամակն ստացա, իհարկե, ժամանակին։ Պատասխանում եմ վորոշ ուշացումով, վորի համար ներողություն եմ խնդրում։

1) Լենինն ասում է, վոր «ամեն մի հեղափոխության ամենագլխավոր հարցը պետական իշխանության հարցն է» (տես հ. XXI, եջ 142)։ Վոր դասակարգի կամ վոր դասակարգերի ձեռքումն է կենտրոնացած իշխանությունը, վոր դասակարգը կամ վոր դասակարգերը պետք է տապալվեն, վոր դասակարգը կամ վոր դասակարգերը պետք է վերցնեն իշխանությունը, — այս է «ամեն մի հեղափոխության ամենագլխավոր հարցը»։

Կուսակցության հիմնական ստրատեգիական լոզունգները, վորոնք իրենց ուժը պահպանում են հեղափոխության այս կամ այն ետապի ամբողջ ժամանակաշրջանում, չեն կարող հիմնական լոզունգներ անվանվել, յեթե նրանք ամբողջությամբ և լիովին չեն հենվում Լենինի այս կարգինալ թեզիսի վրա։ Հիմնական լոզունգները ճիշտ կարող են լինել միայն այն դեպքում, յեթե նրանք կառուցվում են դասակարգային ուժերի մարքսիստական վերլուծության բազայի վրա, յեթե նրանք ուրվագծում են դասակարգային կռվի ֆրոնտում հեղափոխական ուժերի դասավորման ճիշտ սխեման, յեթե նրանք հեշտացնում են մասսաներին

մոտեցնելը հեղափոխության հաղթության համար մղվող պայքարի ճակատին, իշխանությունը նոր դասակարգի կողմից վերցնելու համար մղվող պայքարի ճակատին, յե-թե նրանք կուսակցության համար հեշտացնում են այդ խնդրի իրագործման համար անհրաժեշտ լայն ու հզոր քաղաքական բանակի կազմակերպումը ժողովրդական լայն մասսաներից։

Հեղափոխության այս կամ այն ետապի ընթացքում կարող են տեղի ունենալ պարտություններ ու նահանջներ, անհաջողություններ ու առանձին տակտիկական սխալներ, բայց այդ դեռ չի նշանակում, թե հիմնական ստրատեգիական լոզունգը ճիշտ չե։ Այսպես, որինակ, մեր հեղափոխության առաջին ետապում «ամբողջ գյուղացիության հետ միկտեղ, ցարի ու կալվածատերերի դեմ՝ բուրժուազիային չեզոքացնելով, հանուն բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթության» հիմնական լոզունգը միանգամայն ճիշտ եր, չնայած այն բանին, որ 1905 թվի հեղափոխությունը պարտություն կրեց։

Հետևաբար, չի կարելի կուսակցության հիմնական լոզունգի հարցը շփոթել հեղափոխության զարգացման այս կամ այն աստիճանի վրա տեղի ունեցող նրա պարտությունների կամ անհաջողությունների հարցի հետ։

Կարող ե պատահել, որ հեղափոխության ընթացքում կուսակցության հիմնական լոզունգն արդեն հասցրել ե հին դասակարգերի կամ հին դասակարգի իշխանության տապալման, բայց հեղափոխության մի շարք եական պահանջներ, որոնք այդ լոզունգից են բղխում, իրականացում չեն ստացել, կամ նրանց իրականացումը յերկարաձգվել ե մի ամբողջ ժամանակաշրջանով, կամ նրանց իրականացման համար նոր հեղափոխություն ե պահանջվում, բայց այդ դեռ չի նշանակում, թե հիմնական լոզունգը սխալ ե։ Այսպես, որին., 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունը տապալեց ցարիզմն ու կալվածատերերին, բայց չհասցրեց կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի իրականացման և այլն, բայց այդ դեռ չի նշանակում, թե մեր հիմնական լոզունգը հեղափոխության առաջին ետապում

ճիշտ չեր։ Կամ ելի, Հոկտեմբերյան հեղափոխությունն իրականացրեց բուրժուազիայի տապալումը և իշխանության անցումը պրոլետարիատի ձեռքը, բայց մեկ անդամից չը-տարավ դեպի ա) ընդհանրապես բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը և բ) մասնավորապես գյուղում կուլակությանը մեկուսացնելը,—այս բանը յերկարաձգելով վորոշ ժամանակաշրջանով, բայց այդ դեռ չի նշանակում, թե հեղափոխության յերկրորդ ետապում—«ամենաչքավոր գյուղացիության հետ միկտեղ, կապիտալիզմի դեմ քաղաքում ու գյուղում, միջակ գյուղացիությունը չեզոքացնելու պայմանով՝ հանուն պրոլետարիատի իշխանության» մեր հիմնական լոզունգը ճիշտ չեր։

Հետևաբար, չի կարելի կուսակցության հիմնական լոզունգի հարցը շփոթել այդ լոզունգից բղխող այս կամ այն պահանջների իրականացման ժամկետի ու ձևերի հարցի հետ։

Այս պատճառով մեր կուսակցության ստրատեգիական լոզունգները չի կարելի գնահատել վոչ հեղափոխական շարժման՝ այս կամ այն ժամանակաշրջանում ունեցած եպիզոդիկ հաջողությունների կամ պարտությունների տեսակետից, վոչ ել, առավել ևս, այդ լոզունգներից բղխող այս կամ այն պահանջների իրականացման ժամկետների կամ ձևերի տեսակետից։ Կուսակցության ստրատեգիական լոզունգները կարող են գնահատվել դասակարգային ուժերի մարքսիստական վերլուծության և հեղափոխության ուժերը հեղափոխության հաղթանակի համար, իշխանությունը նոր դասակարգի ձեռքում կենտրոնացնելու համար մղվող պայքարի ճակատում ճիշտ դասավորելու տեսակետից միայն։

Ձեր սխալը, ընկ. Յան—սկի, այն ե, որ դուք շրջանցել եք մեթոդոլոգիական այս կարևորագույն հարցը կամ չեք հասկացել այն։

2) Դուք գրում եք ձեր նամակում.

«Արդյոք ճիշտ ե այն պնդումը, թե մենք ամբողջ գյուղացիության հետ դաշնակցած ընթացել ենք միայն մինչև Հոկտեմբերը։ Վոչ, ճիշտ չե։ «Դաշինք ամբողջ գյուղացիության հետ» լոզունգն ուժի մեջ

եր մինչև Հոկտեմբերը, Հոկտեմբերի մոմենտին և Հոկտեմբերից հետո յեղած առաջին ժամանակաշրջանում, ինչ չափով վոր ամբողջ գյուղացիությունը շահագրգռված եր բուրժուական հեղափոխությունը մինչև վերջն ավարտելու գործով։

Այսպիսով այս մեջբերումից դուրս է գալիս, վոր կուսակցության ստրատեգիական լոզունգը հեղափոխության առաջին ետապի ընթացքում (1905 թ.—1917 թ. փետրվար), յերբ բանը վերաբերում եր ցարական-կալվածատիրական իշխանության տապալմանը և պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրայի հաստատմանը, չեր տարբերվում հեղափոխության յերկրորդ ետապի (1917 թ. փետրվար—1917 թ. հոկտեմբեր) ստրատեգիական լոզունգից, յերբ բանը վերաբերում եր բուրժուազիայի իշխանության տապալմանը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը։ Հետևաբար, դուք ժխտում եք հիմնական տարբերությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և պրոլետարական-սոցիալիստական հեղափոխության միջև։ Իսկ այս սխալը դուք գործում եք այն պատճառով, վոր յերևի չեք ուզում հասկանալ այն հասարակ բանը, վոր ստրատեգիական լոզունգի հիմնական թեման հանդիսանում է իշխանության հարցը հեղափոխության տվյալ ետապում, այն հարցը, թե վո՞ր դասակարգն է տապալվում և վո՞ր դասակարգի ձեռքն է անցնում իշխանությունը։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր դուք այստեղ արմատապես անիրավացի յեք։

Դուք ասում եք, վոր Հոկտեմբերի մոմենտին և Հոկտեմբերից հետո՝ առաջին ժամանակաշրջանում, մենք կիրառում եյինք «դաշինք ամբողջ գյուղացիության հետ» լոզունգը, ինչ չափով վոր ամբողջ գյուղացիությունը շահագրգռված եր բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու գործով։ Բայց ով ասաց ձեզ, թե Հոկտեմբերյան հեղաշրջումն ու Հոկտեմբերյան հեղափոխությունն սպառվում եյին կամ իբրև իրենց հիմնական խնդիր եյին դնում բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը։ Վիրտեղից եք դուք այդ վերցրել։ Մի՞թե բուրժուազիայի իշխանության տապալումը և պրոլետարիատի իշխանության հաստատումը կարելի յե տեղավորել բուրժուական հեղափոխության շրջանակներում։ Պրոլետարիատի դիկտատուրայի նվաճումը բուրժուական հեղափոխության շրջանակներից դուրս դալ չի՞ արդյոք։ Ի՞նչպես կարելի յե պնդել, թե կուլակները (չի՞ վոր նույնպես գյուղացիներ են) կարող եյին աջակցել բուրժուազիայի տապալմանը և իշխանության անցմանը պրոլետարիատին։ Ի՞նչպես կարելի յե ժխտել, վոր հողի ազգայնացման, հողի մասնավոր սեփականության վերացման, հողի առուծախն արգելելու և այլն դեկրետը, չնայած այն բանին, վոր այն չի կարող սոցիալիստական դեկրետ ճանաչվել, անց ենք կացրել մեզ մոտ կուլակության դեմ պայքարելով և վոչ թե նրա հետ դաշնակցած։ Ի՞նչպես կարելի յե պնդել, թե կուլակները (նույնպես գյուղացիներ) կարող եյին աջակցել Խորհրդային իշխանության դեկրետներին ֆաբրիկաների, գործարանների, յերկաթուղիների, բանկերի և այլնի եքսպրոպրիացիայի վերաբերյալ, կամ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու՝ պրոլետարիատի լոզունգին։ Ի՞նչպես կարելի յե պնդել, թե Հոկտեմբերի մեջ հիմնականը հանդիսանում են վոչ թե այդ և դրանց նման ակտերը, վոչ թե բուրժուազիայի տապալումն ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, այլ բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը։

Վեճ չկա այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր խնդիրներից մեկը բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելն եր, վոր առանց Հոկտեմբերյան հեղափոխության նա չեր կարող մինչև վերջը հասցվել, ինչպես նաև ինքը Հոկտեմբերյան հեղափոխությունը չեր կարող ամրապնդվել առանց բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու, և ինչ չափով վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը մինչև վերջն եր հասցնում բուրժուական հեղափոխությունը, նա համակրություն պետք է գտներ բոլոր գյուղացիների կողմից։ Այս ամենն անվիճելի յե։ Բայց մի՞թե կարելի յե այս հիման վրա պնդել, թե բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը վոչ թե ածանցիկ յերևույթ եր Հոկտեմ-

ջերյան հեղափոխության ընթացքի մեջ, այլ նրա գոյությունը կամ նրա հիմնական նպատակը։ Եվ վերջերս մեզ մոտ Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր նպատակը—բուրժուազիայի իշխանության տապալումը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, իմպերիալիստական պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի, կապիտալիստներին եքսպրոպրիացիայի յենթարկելը և այլն։ Ցեվ յեթե սարատեզիական լոզունգի գլխավոր թեման ամեն մի հեղափոխության հիմնական հարցն է, այսինքն՝ իշխանությունը մի դասակարգի ձեռքից մյուս դասակարգի ձեռքն անցնելու հարցը, ապա այստեղից պարզ չէ մինչև, վոր բուրժուական հեղափոխությունը պրոլետարական իշխանության կողմից մինչև վերջը հասցնելու հարցը չի կարելի շփոթել բուրժուազիայի տապալման ու հենց այդ պրոլետարական իշխանությունը նվաճելու հարցի հետ, այսինքն՝ այն հարցի հետ, վորը սարատեզիական լոզունգի գլխավոր թեման և հանդիսանում հեղափոխության յերկրորդ ետապում։

Պրոլետարիատի դիկտատուրայի ամենամեծագույն նվաճումներից մեկն էլ այն է, վոր նա մինչև վերջը հասցրեց բուրժուական հեղափոխությունը և իսկակ ավելց-մաքրեց միջնադարյան կեղտը։ Սա գյուղի համար ունեցավ ամենագլխավոր ու իսկապես վճռական նշանակություն։ Առանց դրան չեր կարող իրականացվել գյուղացիական պատերազմների միացումը պրոլետարական հեղափոխության հետ, վորի մասին Մարքսը խոսել է դեռևս անցյալ դարի յերկրորդ կեսին։ Առանց դրան չեր կարող ամրապնդվել պրոլետարական հեղափոխությունն ինքը։ Ընդամին՝ հարկավոր է նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքը։ Բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը յեղակի ակտ չե։ Իրականում նա մի ամբողջ ժամանակաշրջան տևեց՝ ընդգրկելով վոչ միայն 1918 թվականի պատառները, ինչպես դուք պնդում եք ձեր նամակում, այլև 1919 թվականի (Պովոլժյե-Ուրալ) ու 1919—1920 թ. թ. (Ուկրաինա) պատառները։ Ցես նկատի ունեմ Կոլչակի ու Դենիկինի արշավանքը, յերբ ամբողջությամբ տած գյուղացիության առաջ ծառացավ կալվածատիրական իշխանության վերականգնման վտանգը և յերբ նա հենց վորպես ամբողջություն հարկադրված եր համախմբվելու Խորհրդային իշխանության շուրջն այն նպատակով, վորպեսզի ապահովի բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը և ձեռքում պահի այդ հեղափոխության պտուղները։ Կենդանի կյանքի պրոցեսների այս բարդությունն ու բազմազանությունը, դիկտատուրայի անմիջականորեն սոցիալիստական խնդիրների այս «զարմանահրաշ» միահյուսումը բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու խնդրի հետ հարկավոր է միշտ աչքի առաջ ունենալ՝ ճիշտ հասկանալու համար ինչպես Լենինից ձեր բերած ցիտատները, այնպես էլ կուսակցական լոզունգները կյանքում կենսագործելու մեխանիկան։ Կարելի՞ յե արդյոք ասել, թե այս միահյուսումը խոսում է կուսակցության լոզունգի սխալ լինելու մասին հեղափոխության յերկրորդ ետապում, թե այդ լոզունգը չի տարբերվում հեղափոխության առաջին ետապի լոզունգից։ Վոչ, չի կարելի ասել։ Ընդհակառակը, այդ միահյուսումը միայն հաստատում է կուսակցության լոզունգի ճշտությունը հեղափոխության յերկրորդ ետապում, այն է՝ ամենաչքավոր գյուղացիության հետ մեկտեղ, կապիտալիստական բուրժուազիայի դեմ քաղաքում ու գյուղում, հանուն պրոլետարիատի իշխանության և այլն։ Ինչու։ Այն պատճառով, վոր բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու համար հարկավոր եր նախ Հոկտեմբերին տապալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանություն հաստատել, վորովհետև միայն այդպիսի իշխանությունն է ընդունակ մինչև վերջը հասցնելու բուրժուական հեղափոխությունը, իսկ վորպեսզի Հոկտեմբերին հաստատեյինք պրոլետարիատի իշխանությունը, հարկավոր եր Հոկտեմբերի համար նախապատրաստել ու կազմակերպել համապատասխան քաղաքական բանակ, վորն ընդունակ լիներ տապալելու բուրժուազիային, ընդունակ լիներ հաստատելու պրոլետարիատի իշխանությունը, ըստվորում հարկ չկա ապացուցելու, վոր այդպիսի քաղաքական բանակ մենք կարող եյինք նախապատրաստել ու կազմակերպել միայն այս լո-

զունդով—պրոլետարիատի դաշինք ամենաչքավոր գյուղացիության հետ ընդդեմ բուրժուազիայի, հանուն պրոլետարիատի դիկտատուրայի։ Պարզ է, վոր առանց այդպիսի ստրատեգիական լոզունգի, վորն անց եր կացվում 1917 թ. ապրիլից մինչև 1917 թ. հոկտեմբերը, մենք չեյինք կարող այդպիսի քաղաքական բանակ ունենալ, կնշանակի Հոկտեմբերին չեյինք կարող հաղթություն տանել, չեյինք տալալի բուրժուազիայի իշխանությունը և, հետևաբար, հնարավորություն չեյինք ունենա մինչև վերջը հասցնելու բուրժուական հեղափոխությունը։

Ահա թե ինչու չի կարելի բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը հակադրել հեղափոխության յերկրորդ ետապի ստրատեգիական լոզունգին, վորի խնդիրը ն եր՝ ապահովել իշխանության գրավումը պրոլետարիատի կողմից։

Այս բոլոր «հակասություններից» խուսափելու մի միջոց միայն կա—ընդունել հեղափոխության առաջին ետապի (բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն) ստրատեգիական լոզունգի և հեղափոխության յերկրորդ ետապի (պրոլետարական հեղափոխություն) ստրատեգիական լոզունգի միջև յեղած հիմնական տարբերությունը, ընդունել, վոր հեղափոխության առաջին ետապի ժամանակաշրջանում մենք ընթանում եյինք ամբողջ գյուղացիության հետ մեկտեղ՝ հանուն բուրժուա-դեմոկրատական հեղափոխության, իսկ հեղափոխության յերկրորդ ետապի ժամանակաշրջանում մենք ընթանում եյինք ամենաչքավոր գյուղացիության հետ մեկտեղ կապիտալի իշխանության դեմ՝ հանուն պրոլետարական հեղափոխության։ Իսկ այս հարկավոր է ընդունել, վորովհետև այս բանին մեզ պարտավորեցնում է հեղափոխության առաջին ու յերկրորդ ետապների ժամանակվա դասակարգային ուժերի վերլուծությունը։ Հակառակ դեպքում կարելի չեր լինի բացատրել այն փաստը, վոր մինչև 1917 թվի փետրվարը մենք աշխատանքը կատարում եյինք՝ լոզունգ ունենալով պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան, իսկ 1917 թվի փետրվարից հետո այդ լոզունգը փոխարինեցինք՝ պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության սոցիալիստական դիկտատուրա լոզունգով։ Համաձայնեցեք, ընկ. Ցան—սկի, վոր մի լոզունգի այս փոխարինումը մի այլ լոզունգով 1917 թվի մարտ—ապրիլին չի կարող բացատրվել ձեր սխեմայի կիրառման դեպքում։

Կուսակցության ստրատեգիական յերկու լոզունգների այս հիմնական տարբերությունը Լենինը նշել է դեռևս իր «Յերկու տակտիկա» բրոշյուրում։ Նա այսպես է ձևակերպել բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախապատրաստման ժամանակի կուսակցության լոզունգը.

«Պրոլետարիատը պետք է մինչև վերջը տանի դեմոկրատական հեղաշրջումը, իրեն միացնելով գյուղացիության մասսան, վորպեսզի ուժով հզմի ինքնակալության դիմադրությունը և ջլատի բուրժուազիայի անկայունությունը» (տես հ. VIII, էջ 96)։

Այլ կերպ ասած՝ ամբողջ գյուղացիության հետ մեկտեղ ինքնակալության դեմ, բուրժուազիային չեզոքացնելով՝ հանուն դեմոկրատական հեղաշրջման։

Ինչ վերաբերում է կուսակցության լոզունգին սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում, ապա Լենինն այդ լոզունգն այսպես է ձևակերպել.

«Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի՝ իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, վորպեսզի ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրությունը և ջլատի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայունությունը» (տես նույն տեղը)։

Այլ կերպ ասած՝ ամենաչքավոր գյուղացիության ու առհասարակ բնակչության կիսապրոլետարական խավերի հետ մեկտեղ ընդդեմ բուրժուազիայի՝ մանր բուրժուազիան քաղաքում և գյուղում չեզոքացնելով՝ հանուն սոցիալիստական հեղաշրջման։

Դա 1905 թվականին եր։

1917 թվի ապրիլին, ընորոշելով այն ժամանակվա քաղաքական կացությունը վորպես պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի միահյուսում բուրժուազիայի ռեալ իշխանության հետ, Լենինն ասում եր.

«Ընթացիկ մոմենտի յուրաքանչյուրությունը Ռուսաստանում այն անցումն է [1], որը կատարվել է հեղափոխության առաջին [1] եռապից, որը, պրոլետարիատի թերի գիտակցականության և թերի կազմակերպվածության շնորհիվ իշխանությունը տվեց բուրժուազիային, դեպի նրա յերկրորդ եռապը, որը իշխանությունը պետք է տա պրոլետարիատի ու գյուղացիության ամենաչքավոր խավերի [1] ձեռքը» (տես Լենինի «Ապրիլյան թեզիսները», հ. XX, էջ 88)։

1917 թվի ոգոստոսի վերջին, յերբ Հոկտեմբերի համար կատարվող նախապատրաստությունն ընթանում եր ամբողջ թափով, Լենինը «Գյուղացիներն ու բանվորները» հատուկ հոդվածում գրում եր.

«Միայն պրոլետարիատն ու գյուղացիությունը [1] կարող են տապալել միապետությունը—այս եր այն ժամանակվա (նկատի յե առնված 1905 թվականը։ Ի. Ստ.) նկատմամբ մեր դասակարգային քաղաքականության հիմնական բնորոշումը։ Յեվ այդ բնորոշումը ճիշտ եր։ 1917 թվի փետրվարն ու մարտը մի ավելորդ անգամ հաստատեցին այդ։ Միայն պրոլետարիատը, որը զեկավարում է ամենաչքավոր գյուղացիությանը [1] (կիսապրոլետարներին, ինչպես ասում եր մեր ծրագիրը), կարող է պատերազմը վերջացնել դեմոկրատական հաշտությամբ, բուժել նրա հասցրած վերքերը, սկսել անպայման անհրաժեշտ և անհետաձգելի դարձած քայլերը դեպի սոցիալիզմ,—այս է մեր դասակարգային քաղաքականության բնորոշումն այժմ» (տես հ. XXI, էջ 111)։

Այս հարկավոր չե այնպես հասկանալ, թե մենք արդեն իբր թե այժմ ունենք պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրա։ Այդ, իհարկե, ճիշտ չե։ Մենք դեպի Հոկտեմբերը ընթանում եյինք պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրայի լոզունգով և այն իրականացրինք Հոկտեմբերին ձևականորեն, ինչ չափով որ մենք բլոկ ունեյինք ձախ ես-երների հետ և զեկավարությունը բաժանում եյինք նրանց հետ, թեև փաստորեն մեզանում արդեն այն ժամանակ պրոլետարիատի դիկտատուրա յեր, քանի որ մենք, բոլշևիկներս, մեծամասնություն եյինք կազմում։ Սակայն պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրան դադարեց ֆորմալ կերպով գոյություն ունենալուց ձախ ես-երական «պուտչից» հետո, ձախ ես-երների հետ բլոկը խզելուց հետո,

[1] Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

յերբ զեկավարությունն ամբողջապես ու լիովին անցավ մի կուսակցության ձեռքը, մեր կուսակցության ձեռքը, որը պետության զեկավարությունը չի բաժանում և չի կարող բաժանել ուրիշ կուսակցության հետ։ Հենց այս է, որ մեզանում կոչվում է պրոլետարիատի դիկտատուրա։

Վերջապես, 1918 թվի նոյեմբերին, հետադարձ հայացք գցելով հեղափոխության անցած ուղու վրա, Լենինը գրում եր.

«Այո, մեր հեղափոխությունը բուրժուական է, քանի դեռ մենք ընթանում ենք գյուղացիության՝ որպես մի ամբողջության՝ հետ մեկտեղ։ Սա մենք պարզից էլ պարզ եյինք գիտակցում, հարյուրավոր ու հազարավոր անգամներ ասում եյինք սկսած 1905 թվականից, պատմական պրոցեսի այս անհրաժեշտ ատոմիզմի վրայից յերբեք չենք փորձել վիճ ցատկել, վիճ էլ զեկրետներով վերացնել այն... Բայց 1917 թվականին, սկսած ապրիլ ամսից, Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ [1], իշխանությունը մեր կողմից վերցվելուց առաջ [1], մենք բացահայտորեն ասում եյինք ու պարզաբանում ժողովրդին, հեղափոխությունն այժմ չի կարողանա սրա վրա կանգ առնել, որովհետև յերկիրն առաջ է անցել, կապիտալիզմն առաջ է քայլել, չտեսնված չափերի յե հասել ավերածությունը, որը պահանջելու յե (այդ բառը մոռանում է թե վոչ), պահանջելու յե քայլեր անել դեպի առաջ, դեպի սոցիալիզմը։ Որովհետև այլ կերպ առաջ գնալ, այլ կերպ փրկել պատերազմից խոշտանգված յերկիրը, այլ կերպ թերեվացնել աշխատավորների ու շահագործվողների տառապանքները չի կարելի։ Հենց այնպես դուրս յելավ, ինչպես մենք ասում եյինք։ Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշտությունը։ Սկզբում «ամբողջ» գյուղացիության հետ մեկտեղ միապետության դեմ, կալվածատերերի դեմ, միջնադարի դեմ (և այդ չափով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն)։ Ապա ամենաչքավոր գյուղացիության հետ մեկտեղ, կիսապրոլետարիատի հետ մեկտեղ, բոլոր շահագործվողների հետ մեկտեղ՝ կապիտալիզմի դեմ, այդ թվում գյուղական հարուստների, կուլակների, ագիտատորների դեմ [1], և այդ չափով հեղափոխությունը դառնում է սոցիալիստական» (տես հ. XXIII, էջ 390—391)։

Ինչպես տեսնում եք, Լենինը բազմիցս ընդգծում եր ամբողջ խորությունն այն տարբերության, որը կար բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանի առաջին ստրատեգիական լոզունգի և Հոկտեմբերի նախապատրաստության ժամանակաշրջանի յերկրորդ ստրատեգիական լոզունգի միջև։ Այնտեղ լո-

[1] Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

գունդն է՝ ամբողջ գյուղացիության հետ ինքնակալության դեմ, այստեղ լոզունգն է՝ ամենաչքավոր գյուղացիության հետ բուրժուազիայի դեմ։

Այն փաստը, որ բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը յերկարաձգվեց-դարձավ մի ամբողջ ժամանակաշրջան Հոկտեմբերից հետո, որ, ինչ չափով բուրժուական հեղափոխությունը մինչև վերջն եյինք հասցնում, չեր կարող մեզ չհամակրել «ամբողջ» գյուղացիությունը,—այս փաստը, ինչպես վերևում ֆես արդեն ասել եմ, մազաչափ անգամ չի սասանում այն հիմնական դրույթը, որ մենք դեպի Հոկտեմբեր եյինք ընթանում և Հոկտեմբերին հաղթություն տարանք ամենաչքավոր գյուղացիության հետ մեկտեղ, որ բուրժուազիայի իշխանությունը տապալեցինք և պրոլետարիատի դիկտատուրա հաստատեցինք (դիկտատուրա, որի խնդիրներից մեկն ել յեղավ բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը) ամենաչքավոր գյուղացիության հետ մեկտեղ, յերբ կային կուլակության (նույնպես գյուղացիներ) դիմադրություն և տատանումներ միջակ գյուղացիության կողմից։

Թվում է, թե պարզ է։

3) Այնուհետև ձեր նամակում դուք գրում եք.

«Արդյոք ճիշտ է այն պնդումը, թե «մենք մոտեցանք Հոկտեմբերին այս լոզունգով՝ դաշինք գյուղական չքավորության հետ՝ միջակի չեզոքացմամբ։ Վոչ, ճիշտ չե։ Արդեն վերը մատնանշված նկատառումներից ու Լենինից բերված քաղվածքներից յերևում է, որ այս լոզունգը կարող եր ծագել միայն այն ժամանակ, յերբ «հասունացավ դասակարգային բաժանումը գյուղացիության ներսում» (Լենին), այսինքն՝ «1918 թ. ամառն ու աշնանը»։

Այս մեջբերումից դուրս է գալիս, որ կուսակցությունը միջակի չեզոքացման ուղին բռնեց վոչ թե Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում և վոչ ել Հոկտեմբերի ժամանակ, այլ Հոկտեմբերից հետո և մանավանդ 1918 թվականից հետո, չքավորական կոմիտեներից հետո։ Այս միանգամայն սխալ է, ընկ. Յան—սկի։ Ընդհակառակը, միջակի չեզոքացման քաղաքականությունը վոչ թե սկսվեց, այլ վերջացավ չքավորական կոմիտեներից հետո, 1918 թվականից հետո։ Միջակի չեզոքացման քաղաքակա-

նությունը վերացվեց (և վոչ թե մացվեց) մեր պրակտիկայում հենց 1918 թվականից հետո։ Հենց 1918 թվականից հետո, 1919 թվականի մարտին, բանալով մեր կուսակցության VIII համագումարը, Լենինն ասաց.

«Հին ժամանակվա սոցիալիզմի լավագույն ներկայացուցիչները,—յերբ նրանք դեռ հավատում եյին հեղափոխությանը և թեորիապես ու գաղափարապես ծառայում եյին նրան,—խոսում եյին գյուղացիության չեզոքացման մասին, այսինքն՝ այն մասին, որ այդ միջակ գյուղացիությունը դարձնեն յեթե վոչ պրոլետարիատի հեղափոխությանը ակտիվորեն ոգնող, գոնե այդ հեղափոխությանը չխանգարող, չեզոք, մեր թշնամիների կողմը չբռնող հասարակական խավ։ Ինդրի այս վերացական, թեորիական դրվածքը մեզ համար լիովին պարզ է։ Բայց այն բավական չե։ Մենք մտել ենք սոցիալիստական շինարարության մի այնպիսի ստադիա[1], յերբ հարկավոր է մշակել կոնկրետ կերպով, մանրամասնորեն գյուղում կատարվող աշխատանքի փորձով ստուգված այն հիմնական կանոններն ու ցուցումները, որոնցով մենք պետք է զեկավարվենք, որպեսզի միջակ գյուղացու նկատմամբ կանգնենք հատատուն դաշինքի հողի վրա» (տես հ. XXIV, եջ 114)։

Ստացվում է, ինչպես տեսնում եք, ձեր նամակում ձեր առաջին ուղղակի հակադիր մի բան, ընդվզորում դուք այստեղ մեր իսկական կուսակցական պրակտիկան գլխիվայր եք շուռ տալիս, չեզոքացման սկիզբը շփոթելով նրա վերջի հետ։

Միջակը նվվում ու տատանվում եր հեղափոխության ու հակահեղափոխության միջև, քանի դեռ տապալում եյինք բուրժուազիային, քանի դեռ խորհուրդների իշխանությունն ամրացված չեր, և դրա պատճառով ել հարկ եր լինում միջակին չեզոքացնել։ Միջակն սկսեց մեր կողմը շուռ գալ, յերբ նա սկսեց համոզվել, որ բուրժուազիան «լրջորեն» է տապալված, որ խորհուրդների իշխանությունն ամրանում է, կուլակին հաղթահարում են, Կարմիր բանակն սկսում է հաղթել քաղաքացիական ճակատներում։ Հենց այսպիսի բեկումից հետո հնարավոր դարձավ կուսակցության ստրատեգիական այն յերրորդ լոզունգը, որ Լենինը տվեց կուսակցության VIII համագումարում, այն է՝ հենվելով չքավորության վրա և հատատուն դաշինք հաստատելով

[1] Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

միջակի հետ—հասաջ հանուն սոցիալիստական շինարարության։

Դուք ինչպես կարողացաք մոռանալ այս հանրահայտ փաստը։

Ձեր նամակից բղխում է այնուհետև, որ միջակի չեզոքացման քաղաքականությունը պրոլետարական հեղափոխության տեցնելու ժամանակ և այդ հեղափոխության հաղթությունից հետո առաջին տարին սխալ է, պիտանի չէ և, այդ պատճառով, անընդունելի է։ Այս միանգամայն սխալ է, ընկ. Ցան—սկի։ Բանը հենց դրա հակառակն է։ Հենց բուրժուազիայի իշխանության տապալման ժամանակ և մինչև պրոլետարիատի իշխանության ամրացումն է միջակն ամենից շատ տատանվում ու դիմադրում։ Հենց այս ժամանակաշրջանում է, որ անհրաժեշտ է դաշինքը չքավորության հետ ու միջակի չեզոքացումը։

Ձեր սխալի վրա համառելով, դուք պնդում եք, որ գյուղացիության հարցը մեծ նշանակություն ունի վոչ միայն մեր յերկրի համար, այլև մյուս յերկրների համար, «վորոնք ավելի կամ պակաս չափով հիշեցնում են մինչհոկտեմբերյան Ռուսաստանի եկոնոմիկան»։ Այս վերջինն, իհարկե, ճիշտ է։ Բայց ահա թե ինչ է ասում Լենինը Կոմինտերնի II կոնգրեսում, ազրարային հարցի վերաբերյալ իր թեզիսներում՝ պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու ժամանակաշրջանում միջակի նկատմամբ պրոլետարական կուսակցությունների վարելիք քաղաքականության մասին։ Ամենաչքավոր գյուղացիությանը կամ, ավելի ճշգրիտ, «գյուղի աշխատավոր ու շահագործվող մասսաներին» բնորոշելով վորպես առանձին մի խումբ, վորը բաղկացած է գյուղատնտեսական բանվորներից, կիսապրոլետարներից կամ պարցելային գյուղացիներից ու մանր գյուղացիությունից, և հետո անցնելով միջակ գյուղացիության՝ վորպես գյուղի հատուկ խմբի՝ հարցին՝ Լենինն ասում է.

«Միջակ գյուղացիություն» անվան տակ անսեսագիտական իմաստով հարկավոր է հասկանալ մանր հողագործներին, վորոնք սեփականության կամ վարձակալության իրավունքով նույնպես փոքր հողամասերի

յեն տիրում, բայց այնուամենայնիվ այնպիսի հողամասերի, վորոնք կապիտալիզմի որով իբրև ընդհանուր կանոն տալիս են բնատնիքի ու անտեսության վոչ միայն աղքատիկ ապրուստը, այլև վորոշ հավելուրդ ստանալու հնարավորություն,—հավելուրդ, վորն ընդունակ է, գոնե լավագույն տարիներում, կապիտալի վերածվելու. այդ մանր հողագործները բավականին հաճախ են դիմում ոտար աշխատուժ վարձելուն... Հեղափոխական պրոլետարիատը չի կարող իբրև համար թնդիր դնել այդ խավն իր կողմը գրավելը,—գոնե ամենամռնիկ ապազայի և պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի սկզբի համար։ Նա պետք է առնմանափակվի այդ խավը չեզոքացնելու խնդրով,—այսինքն՝ տարպի նրան, վոր ակտիվ աջակցություն ցույց չտա բուրժուազիային՝ վերջինիս կողմից պրոլետարիատի դեմ մղվող պայքարում» (տես Կոմինտերնի II կոնգրեսի սղագիր հաշվետվությունը, եջ 610—611)։

Սրանից հետո ինչպես կարելի է պնդել, թե միջակի չեզոքացման քաղաքականությունը կարող էր «ծագել» մեզ մոտ «1918 թվականի ամառը և աշնանը» «միայն», այսինքն՝ խորհուրդների իշխանության, պրոլետարիատի իշխանության ամրացման գործում յեղած վճռողական հաջողություններից հետո։

Ինչպես տեսնում եք, պրոլետարական կուսակցությունների ստրատեգիական լոզունգի հարցը դեպի սոցիալիստական հեղափոխություն կատարվող անցման ու պրոլետարիատի իշխանության ամրապնդման մոմենտին, նույնպես, ինչպես նաև միջակի չեզոքացման հարցը, այնպես պարզ չե, ինչպես դուք պատկերացնում եք այն։

4) Բոլոր վերը ասածներից յերևում է, վոր Լենինի յերկերից ձեր բերած ցիտատները վոչ մի չափով չեն կարող հակադրվել կուսակցության՝ հեղափոխության յերկրորդ ետապի հիմնական լոզունգին, վորովհետև նրանք, այդ ցիտատները ա) խոսում են վոչ թե Հոկտեմբերից առաջ կուսակցության ունեցած հիմնական լոզունգի մասին, այլ բուրժուական հեղափոխությունը Հոկտեմբերից հետո մինչև վերջը հասցնելու մասին, բ) նրանք վոչ թե հերքում, այլ հաստատում են այս լոզունգի ճշտությունը։ Ցես արդեն վերևում ասել եմ և հարկադրված եմ մեկ անգամ ել կրկնել, վոր հեղափոխության յերկրորդ ետապում, մինչև իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցնելու ժամանակաշրջանը կուսակցության ունեցած ստրատեգիական լոզունգին,

11-28845

ԱՍՏԱՅԻՆ

որի գլխավոր թեման իշխանության հարցն է, չի կարելի հակադրել բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու խնդիրը, որն անց էր կացվում իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցնելուց հետո յեկող ժամանակաշրջանում։

5) Դուք խոսում եք «Правда»-յում տպված ընկ. Մոլոտովի «Բուրժուական հեղափոխության մասին մեր յերկրում» (12 մարտի 1927 թ.) հայտնի հոդվածի մասին, որը, բանից դուրս և գալիս, հենց «դրդել է» ձեզ պարզաբանման համար դիմելու ինձ։ Ցավս չգիտեմ, թե դուք հոդվածներն ինչպես եք կարդում, ընկ. Յան—սկի։ Ցավս ել եմ կարդացել ընկ. Մոլոտովի հոդվածը և կարծում եմ, որ այն վոչ մի չափով չի հակասում այն բանին, ինչ ասված է մեր կուսակցության XIV համագումարին իմ արած զեկուցման մեջ՝ գյուղացիության վերաբերյալ մեր կուսակցության լոզունգների մասին։ Ընկ. Մոլոտովը իր հոդվածում խոսում է կուսակցության վոչ թե Հոկտեմբերի ժամանակաշրջանի հիմնական լոզունգի մասին, այլ այն մասին, որ ինչ չափով որ կուսակցությունը Հոկտեմբերից հետո մինչև վերջն էր հասցնում բուրժուական հեղափոխությունը, նա վայելում էր բոլոր գյուղացիների համակրանքը։ Բայց ցավս արդեն վերևում ասել եմ, որ այս փաստի հավաստումը չի ժխտում, այլ, ընդհակառակը, հաստատում է այն հիմնական դրույթի ճշտությունը, որ մենք տապալեցինք բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի դիկտատուրա հաստատեցինք ամենաչքավոր գյուղացիության հետ մեկտեղ ու միջակի չեզոքացմամբ, ընդդեմ քաղաքի ու գյուղի բուրժուազիայի, որ առանց դրան մենք չպիտի կարողանայինք մինչև վերջը հասցնել բուրժուական հեղափոխությունը։

«Большевик» № 7—8,
15 ապրիլի 1927 թ.

Հայերեն թարգմանությունը խմբագրեց Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Չիդեջյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Դյավլիտի լիազոր №Կ—2450, հրատ. № 670,
Պատվեր № 175, տիրաժ 5.000
Հանձնված է արտադրության 21/XI 1938 թ.
Ստորագրված է տպագրելու 10/I 1939 թ.
Գինը 20 կ., կազմը 35 կ.

Գլավհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան, Յերևան, Աբովյանի № 65

4

ՀՀ Ազգային գրադարան
NL0928254

13 ФЕВ 1939
76
ԳԻՆԸ 55 Կ.
11
28846

И. СТАЛИН

О ТРЕХ ОСНОВНЫХ ЛОЗУНГАХ ПАРТИИ ПО КРЕСТЬЯНСКОМУ ВОПРОСУ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939